

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ**  
**ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ**

**YEREVAN STATE UNIVERSITY**  
**FACULTY OF HISTORY**

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**  
**ԵՎ**  
**ՄՇԱԿՈՒՅԹ**

**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ**  
(ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴԿԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԷՐ)

**ИСТОРИЯ И КУЛЬТУРА**  
**АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ**  
(СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ)

**HISTORY AND CULTURE**  
**JOURNAL OF ARMENIAN STUDIES**  
(COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES)

**ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN**  
**ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԳՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS**  
**2017**

*Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի և  
Պատմության ֆակուլտետի գիտական խորհուրդների որոշմամբ*

Գլխավոր խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**  
Խմբագրական խորհուրդ՝

**Արամ Մինոնյան** - նախագահ (ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.),  
**Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան**  
(պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր), **Ալբերտ Ստեփանյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան**  
(պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Լևոն Չուգասյան**  
(արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Իգիթ Ղարիբյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան**  
(պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան**  
(պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պատմ. գիտ. դոկտոր), **Հովիկ Գրիգորյան**  
(պատմ. գիտ. թեկն., դոցենտ), **Մխիթար Գաբրիելյան** (պատմ. գիտ. թեկն., դոցենտ),  
**Էդգար Հովհաննիսյան** (պատմ. գիտ. թեկն., դոցենտ), **Հակոբ Պետրոսյան** (բանասիր. գիտ. թեկն.):

Главный редактор: докт. ист. наук, проф. **Эдик Минасян**  
Редакционная коллегия:

**Արամ Սիմոնյան** (председатель, ректор ЕГУ, членкор. АН РА, докт. ист. н., проф.), **Ашот Мелконян**  
(академик АН РА, докт. ист. н., проф.), **Артак Мовсисян** (докт. ист. наук, проф.), **Альберт Степанян**  
(докт. ист. н., проф.), **Айк Аветисян** (докт. ист. н., проф.), **Айрапет Маргарян** (докт. ист. н., проф.),  
**Левон Чугасзян** (докт. искусствовед. н., проф.), **Игит Гариббян** (докт. ист. н., проф.), **Генрих Абрамян**  
(докт. ист. н., проф.), **Айказ Оганесян** (докт. ист. н., проф.), **Гамлет Петросян** (докт. ист. н., проф.),  
**Ашот Нерсесян** (докт. ист. н., проф.), **Арман Егиазарян** (докт. ист. наук), **Овик Григорян** (канд. ист. н., доц.),  
**Мхитар Габриелян** (канд. ист. н., доц.), **Эдгар Оганнисян** (канд. ист. н., доц.), **Акоп Петросян**  
(канд. филолог. наук).

Editor-in-Chief- Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**  
Editorial Board:

**Aram Simonyan** (Chairman, Rector of YSU, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.),  
**Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan**  
(Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of  
Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of  
Arts, prof.), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences,  
prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences,  
prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences),  
**Hovik Grigoryan** (PhD of History, associate professor), **Mkhitar Gabrielyan** (PhD of History,  
associate professor), **Edgar Hovhannisyan** (PhD of History, associate professor), **Hakob Petrosyan**  
(PhD in Philology).

ISSN 1829-2771 3

## Արման Եղիազարյան

### ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԵՑԱԿԱՆ ՄԻԶԱԿԱՅՐԵՐԻ ԶԵՎԱԿՈՐՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ «ԴԱՍԱԿԱՆ» ԵՎ «ՆՈՐ» ՍՓՅՈՒՌՔՈՒՄ (ԼԻԲԱՆԱՆԻ ԵՎ ՌԴ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

*Բանալի բառեր- գաղթաշխարհ, համայնք, սփյուռք, միջավայր, համակեցություն, կազմակերպություն, կառուցվածք, «մոդել», սփյուռքացում:*

#### **ՄՈՒՏՔ. ՍՓՅՈՒՌՔԻ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՅՆ**

Հայոց ցեղասպանությունից հետո իրավիճակը մեծապես փոխվել էր հայ գաղթաշխարհում: Ցեղասպանությունից փրկված հարյուր հազարավոր հայեր տարածվել էին աշխարհում՝ բազմապատկելով դարեր ի վեր գոյություն ունեցող գաղթավայրերի հայության թիվը և ստեղծելով տասնյակ նոր գաղթավայրեր: Այդպիսով գաղթաշխարհում սկզբնավորվեց նոր գաղթականության սփյուռքացման գործընթացը: Իրավիճակի փոփոխման առումով հատկապես նշելի են այնպիսի իրողություններ, ինչպիսիք են հայրենի պետության՝ Հայաստանի Հանրապետության գոյությունը և նրա հետ հարաբերությունները, համասփյուռքյան կազմակերպությունների ի հայտ գալը և ի վերջո 1920-30-ական թթ. խորհրդային Հայաստանի կողմից արտերկրի հայության հետ հարաբերությունների աստիճանական խզման պայմաններում վերջինիս կազմակերպությունների կողմից համայնքային կյանքի կազմակերպմանը միտված գործունեության իրականացումը: Նշված իրողությունները, որոնք բացառապես վերագրելի են հետեղեռնյան շրջանին, ծնել են այն հիմնավոր տեսակետը, որ հայկական արդի Սփյուռք Հայոց ցեղասպանության հետևանքն է<sup>1</sup>:

Հ. Մելիքսեթյանը կարծում է, որ Սփյուռքը սկսել է կազմավորվել Առաջին համաշխարհային պատերազմից հետո՝ գաղթավայրերում հարյուր հազարավոր հայ գաղթականների հայտնվելով: Այն վերջնականապես ձևավորվել է 1920-ական թթ., երբ շրջանառության մեջ է դրվել «Ցրոնք» կամ «Սփյուռք» հասկացությունը<sup>2</sup>: Ըստ հեղինակի դիպուկ դիտարկման՝ Սփյուռքի կազմավորումը տեղի է ունեցել Հայաստանում խորհրդային կարգերի հաստատմանը զուգահեռ<sup>3</sup>:

Կ. Դալլաթյանը, որ Սփյուռքի ձևավորումը թվագրում է 1920-30-ական թվականներով, այն համարում է ազգային հավաքական կեցության ձև<sup>4</sup>:

Ըստ է. Մելքոնյանի՝ Սփյուռքի ծնունդը կապվում է արտերկրում հաստատված հայության հայրենիք վերադառնալու անհնարինության գիտակցման հետ<sup>5</sup>:

Հույժ կարևոր է Խ. Թուլոյանի դիտարկումը Սփյուռքի ձևավորման վերաբերյալ: Ըստ նրա՝ այդ գործընթացում էական նշանակություն են ունեցել հայության երկու արտագաղթերը՝ Հայոց ցեղասպանությունից հետո և ՀՀ խորհրդայնացման հետևանքով<sup>6</sup>: Վերջին իրողությունը հույժ կարևոր էր՝ կապված Հայաստանի առաջին Հանրապետության նախկին ղեկավարության արտասահմանում հաստատվելու հետ:

Փաստորեն կարող ենք արձանագրել, որ խնդրով զբաղված հեղինակների կողմից հայ գաղթականության սփյուռքացման գործընթացը թվագրվում է 1920-30-ական թվականներով, սակայն նրանց կարծիքները տարբերվում են գործընթացի բովանդակ-

<sup>1</sup> Տե՛ս Մելիքսեթյան Հ., Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.), Ե., 1985, էջ 49:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 4:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 49-53:

<sup>4</sup> Տե՛ս Դալլաթյան Կ., Հայ Սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), Ե., 2004, էջ 75:

<sup>5</sup> Տե՛ս Дятлов В., Мелконян Э., Армянская Диаспора: очерки социокультурной типологии, Е., 2009, с. 42-43. Տե՛ս նաև Մելքոնյան Է., Սփյուռք, «Հայ Սփյուռք» հանրագիտարան, Ե., 2003, էջ 9:

<sup>6</sup> Տե՛ս Tölölyan Kh., Elites and Institutions in the Armenian Transaction, «Diaspora», A Journal of Transnational Studies, vol. 9, № 1, spring, 2000, pp. 107-136.

կային բաղադրիչի առումով, քանի որ հեղինակների մի մասը այդ գործընթացում «ընդգրկում է» բացառապես Ցեղասպանությունից մազապուրծ գաղթականությանը: Մինչդեռ արտասահմանում հայ գաղթականության կյանքի կազմակերպման և ըստ այդմ նաև հայկական արդի Սփյուռքի ձևավորման գործում էական դերակատարություն են ունեցել 1921 թ. ՀՀ-ից տեղափոխված ազգային և պետական գործիչները: Նրանց հաստատվելը Սփյուռքում չէր կարող կարևոր արդյունքներ չարձանագրել և մասնավորապես այն համայնքներում, որտեղ լուրջ դերակատարություն ուներ Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ): Այդ իսկ պատճառով մեր հետազոտություններից մեկում Սփյուռքի ձևավորման գործընթացը մեծապես կապել ենք 1921 թ. արտասահմանում հաստատված ՀՀ նախկին ղեկավարության կողմից արտասահմանի հայության կյանքի կազմակերպմանն ուղղված նպատակադիր գործունեության հետ<sup>1</sup>: Այսպիսով Սփյուռքի վերջնական ձևավորումը հետևանք էր սեփական ուժերով ազգային խնդիրների լուծման պատմական անհրաժեշտության գիտակցման, որն առաջացել էր Խորհրդային Հայաստանի ղեկավարության կողմից սփյուռքահայության հետ կապերի աստիճանական խզման քաղաքականության հետևանքով: Այդ շրջանում հայկական քաղաքական կազմակերպությունները ստիպված եղան գործունեություն ծավալել բացառապես արտասահմանում, քանի որ ձևավորվել էր զգալի հակադրություն Խորհրդային Հայաստանի և արտերկրի հայության շրջանում գործող ազդեցիկ կազմակերպությունների միջև<sup>2</sup>: Բացառություն չէր նաև Սփյուռքի ձևավորման հենց առաջին տարիներին վերջնականապես կազմավորված Ռամկավար ազատական կուսակցությանը (1921 թ.)<sup>3</sup>:

Պետք է նաև հատկապես ընդգծել Խորհրդային Հայաստանի հետ հարաբերությունների կարևորությունը Սփյուռքի և նրա հատվածների կառուցվածքային ձևավորման առումով: Խնդիրն այն է, որ ՀՅԴ-ն, որ ի սկզբանե Խորհրդային Հայաստանի իշխանությունների կողմից ընկալվում էր որպես թշնամի, սփյուռքյան մյուս կառույցներից ավելի վաղ ձեռնամուխ եղավ սեփական համակեցական միջավայրի ձևավորմանը, որի արդյունքում նրա ուղեկից կամ դուստր կազմակերպությունները (կրթամշակութային, երիտասարդական և այլն) ձևավորվեցին ավելի վաղ, քան մյուս կազմակերպություններինը (հատկապես կրթամշակութային կազմակերպությունների առումով), որոնք մինչև 1930-ական թվականները բավականին սերտ հարաբերությունների մեջ էին Խորհրդային Հայաստանի հետ: Այդուհետ այդ կազմակերպությունները ևս ստանձնեցին սեփական հնարավորություններով Սփյուռքի տարբեր հատվածներին կազմակերպելու առաքելությունը՝ ձևավորելով կուսակցական-կազմակերպական համակարգեր:

Անդրադառնալով Սփյուռքի, որպես ազգային համակեցական (ներազգային կենսագործունեության) միջավայրի, էական առանձնահատկություններին, կարող ենք նշել, որ այն իրենից ներկայացնում էր գաղթաշխարհի՝ ընկերային, արժեքային և կառուցվածքային առումներով որակապես նոր մակարդակ, երբ հայրենիքի հետ հարաբերությունները խիստ սահմանափակ էին՝ ստիպելով արտերկրի հայությունն ինքնապահպանման առումով ապավինելու միմիայն սեփական ուժերին: Մյուս կողմից, հենց այդ շրջանում են սկսում գործունեություն ծավալել համասփյուռքյան կազմակերպությունները, վերջիններիս շուրջ ձևավորվում են քաղաքական, մշակութային, կրթական, բարեգործական, երիտասարդական, լրատվական և այլ համասփյուռքյան կառույցների ցանցեր, և առավել ընդգրկում է դառնում հայկական ինքնության պահպանության միջավայրը:

Հատուկ ուշադրության է արժանի նաև այն իրողությունը, որ Սփյուռքի ձևավորման գործընթացում ըստ էության այդպես էլ չընդգրկվեց գաղթականության այն

<sup>1</sup> Տե՛ս Եղիազարյան Ա., Հայաստանի առաջին Հանրապետության ղեկավարության հաստատումը Սփյուռքում. «Հոգևոր Հայաստան»-ի ստեղծումը (հայեցակարգային որոշ դիտարկումներ), «Հայ գաղթականությունը և Հայրենիք-Սփյուռք կապերը 1918-1985 թթ.» միջազգային գիտաժողովի զեկուցումներ, Ե., 2011, էջ 48:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 48-50:

<sup>3</sup> Տե՛ս Դալլաքյան Կ., Ռամկավար ազատական կուսակցության պատմություն (1921-1940), գիրք I, Ե., 1999, էջ 13, 21:

հատվածը, որ տասնամյակներ շարունակ ապրեց հայրենիք տեղափոխվելու ակնկալիքով: Խոսքը հայության այն շուրջ 150 հազար զանգվածի մասին է, որ Խորհրդային Հայաստան տեղափոխվեց 1918-1936 և 1946-1948 թթ.:

Ուստի, երբ խոսում ենք հայկական արդի Սփյուռքի ձևավորման մասին, ապա խոսքը վերաբերում է նախևառաջ նման համակարգերի ձևավորմանը: Մյուս կողմից խոսքը նաև արտերկրում սփռված հայության շրջանում հայրենագրված մեկ ամբողջության՝ Սփյուռք հանդիսանալու գիտակցության սկզբնավորման մասին է:

## 1. *ՆԵՐԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՌԻՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ*

Մերձավոր Արևելքի հայությունը, և հատկապես ներառված Լիբանանի հայ համայնքն առաջիններից մեկն էր, որ ընդգրկվեց «սփյուռքացման» գործընթացում, որը արտահայտվեց տարբեր համայնքներում ներազգային կենսագործունեության միջավայրերի ի հայտ գալով: Հայաստանի առաջին Հանրապետության նախկին ղեկավարությունը, հաստատվելով Սփյուռքում, ակտիվ գործունեություն ծավալեց աշխարհասփյուռ հայությանը կազմակերպված վիճակ հաղորդելու ուղղությամբ: Այդ ենթատեսքստում 1920-ական թթ. Սփյուռքում սկսվեց «Հոգևոր Հայաստան»-ի ստեղծման գործընթացը: «Հոգևոր Հայաստան» գաղափարաբանական հասկացությունն օգտագործում էին Սփյուռքում հաստատված Հայաստանի առաջին հանրապետության նախկին պետական այրերը (Ս. Վրացյան, Ն. Աղբալյան, Լ. Շանթ, Գ. Նժդեհ և այլք): Այն նշանակում էր աշխարհում ցրված ազգի հոգևոր հավաքականություն՝ հիմնված ձևավորվող ներազգային կենսագործունեության միջավայրի վրա: Վերջինիս հայեցակարգային բնորոշումը լավագույնս արտահայտվում է Ս. Վրացյանի հետևյալ խոսքում. «Կազմակերպելով և բարեշինելով հանդերձ իր ներքին կյանքը՝ Հայ Սփյուռքը չմոռացավ ու չկտրվեց Մայր Հայրենիքից, իրեն միշտ զգաց Հայրենիքի մեկ մասը՝ մի տեսակ «Հոգևոր Հայաստան»<sup>1</sup>: Ըստ Ս. Վրացյանի՝ աշխարհում ցրված հայությանը որպես մեկ հավաքականություն ձևավորելու փորձ էր կատարվում, որը իրականացվում էր ինչպես առանձին գաղթօջախներում՝ դրանք վերածելով կազմակերպված համայնքների, այնպես էլ համասփյուռքյան ձևաչափում: Ստիպված լինելով կտրվել մայր հայրենիքից, ապրել առանց նրա, օտար ափերում փորձ էր կատարվում ստեղծելու մի իրականություն, որտեղ աշխարհասփյուռ հայության կյանքը համակարգվում, ղեկավարվում և ուղղորդվում էր՝ ստեղծելով սփյուռքահայության ներքին կյանքի տարբեր բնագավառները կարգավորող կառույցներ ու կազմակերպություններ:

Ակնհայտ է, որ աշխարհասփյուռ հայության հոգևոր հավաքականությունը սկսել էր կոչվել «Հոգևոր Հայաստան»: Գ. Նժդեհը գրում էր. «Կտրված մայր հողից և հայրենի ժողովրդի կենցաղից՝ նա (իմա՝ սփյուռքահայությունը) դարձել է հոգեպես անհող և անհայրենիք: ...Հայաստանից դուրս, օտարության մեջ, միայն Ցեղի գաղափարն ու պաշտամունքը կարող են փոխարինել հայրենի հողն ու ժողովուրդը: ... Այսօր, մխիթարության ու հպարտանքի երկու առարկա ունենք-Ցեղային Շարժումը և մեր մարտական ուժը: Արեցե՛ք երկուսն էլ, որ ապրեք իբրև Ազգ և Հայրենիք»<sup>2</sup>: Ընդհանրապես, նա մշակել էր «Երբե՛ք և ոչ մի տեղ՝ առանց հոգևոր Հայրենիքի»<sup>3</sup> կարգախոսը:

«Հոգևոր Հայաստան» ձևավորելու համար նախևառաջ հիմք էր ընդունվում ՀՅԴ կազմակերպական կառույցը: Առաջին հերթին շեշտը դրվում էր կուսակցության տեղական կառույցների վրա: Ճանաչված գործիչ Ա. Սահակյանը, նկարագրելով 1920-ական թթ. Մերձավոր Արևելքի գաղթօջախներում ՀՅԴ իրականացրած գործունեությունը, մասնավորապես ընդգծում է. «...ընկերները թափով նվիրվեցան աշխատանքի: Որքան արագ գլուխ գար մեր կոմիտեներու կազմությունը, եւ որքան ուժեղ ըլլային անոնք, այնքան դյուրին պիտի ըլլար ընդհանուր համակարգություն մտցնել ժողո-

<sup>1</sup> Վրացյան Ս., Խոսք ընդ ուսուցչի. Տ. Տ. Գևորգ Զ սրբ. կաթողիկոսին, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի «Տարեգիրք», 2009, էջ 205:

<sup>2</sup> Գարեգին Նժդեհ, Երկեր, հ. 1, Ե., 2002., էջ 480:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 82:

վուրդին մեջ»<sup>1</sup>: Նմանապես Վ. Նավասարդյանը գրում էր, որ «Մեր գլխավոր մտահոգությունը պիտի լինի յուրաքանչյուր գաղութի հայությունն իբրև համայնք, իբրև մեկ ուրույն ազգային միավոր խմբել և համաձայն ժամանակակից պետական իրավունքի և ըմբռնումների օժտել նրան իր ներքին ազգային-կուլտուրական գործերը վարելու անհրաժեշտ իրավունքներով»<sup>2</sup>: Ասվածից պետք է եզրակացնել, որ հայ գաղթականության ներքին կյանքի կարգավորման նպատակի իրականացման գործում մեծանուն գործիչները շեշտը նախևառաջ դնում էին սեփական կառույցի ամրապնդման վրա: Այդ գործունեության կենտրոնը Մերձավոր Արևելքն էր, որտեղ ապաստանել էին ինչպես Հայոց ցեղասպանությունից փրկված բազմահազար հայեր, այնպես էլ հայրենիքից խորհրդային ղեկավարության կողմից հալածված բազմություններ:

«Հոգևոր Հայաստան»-ի գաղափարախոսների ջանքերով Սփյուռքում աստիճանաբար ի հայտ են գալիս մշակութային, կրթական, կանանց, երիտասարդական, բարեգործական և այլ բնույթի կազմակերպություններ, միություններ և հաստատություններ, իսկ արդեն իսկ գոյություն ունեցող նմանատիպ կազմակերպություններն ու միությունները ավելի են ընդարձակում իրենց գործունեությունը: Նման կառույցների գործունեությունը ուներ տարբեր տարածական շրջանակներ: Այն երբեմն ընդգրկում էր որևէ առանձին վերցրած համայնք, իսկ երբեմն էլ՝ ունենում համասփյուռքյան տարածքում<sup>3</sup>:

«Հոգևոր Հայաստանի» գաղափարաբաններն ավելի հեռուն գնացին՝ խորհելով նաև «անհող պետության» ձևավորման մասին: 1924 թ. Ն. Աղբալյանը կարծում էր, որ «անհրաժեշտ է, որ արտասահմանի հայությունը, բոլոր գաղութները ստեղծեն բարձրագույն կազմակերպություն մը համապատասխան ճյուղավորումներով: Կազմվին գավառային, շրջանային մարմիններ, որոնք միավորված ըլլան կեդրոնական խորհրդի մը հատուկ և համապատասխան սահմանադրությամբ: Տեսակ մը բարոյական պետություն, անհայրենիք պետություն, պետական ստորոգելիներով, ազգային և միջազգային իրավական կարգերով: Այդ մարմինը գերագույն մարմինն է արտասահմանի հայության, իր շուրջը պիտի համախմբե բոլոր ցրված գաղութներու հայությունը, անոնց ազգային, մշակութային, տնտեսական գործունեությունները՝ պետության և քաղաքացիական փոխհարաբերություններով: Մյուս կողմե ամեն գաղութ իր ապրած շրջանակին մեջ պիտի մեկուսանա, չպիտի ըլլա քաղաքացի իր ապրած երկրին, այս անջատումով միանալու համար իր ազգային, ի ազգայնության համապատասխան կազմակերպության, որ պետք է ճանաչվի նաև Ազգերի դաշնակցության կողմե»<sup>4</sup>: Ակնհայտ է, որ խոսքը սփյուռքահայության կազմակերպման մի ամփոփ հայեցակարգի մասին է, որի հիմնադրույթներն էին.

1. համահայկական կառույցի ստեղծումը,
2. կառույցի շրջանակներում տարածաշրջանային և տեղական ենթակառույցների ձևավորումը,
3. կառույցի «սահմանադրության» ընդունումը,
4. կառույցի շրջանակում «անհող/անհայրենիք պետության» կազմավորումը,
5. պետությանը բնորոշ կառույցների հիմնումը,
6. սփյուռքահայության համախմբումը և նրա մշակութային, ազգային և տնտեսական կյանքի համակարգումը,
7. «անհող/անհայրենիք պետության» ներսում պետություն-քաղաքացի փոխհարաբերությունների ստեղծումը,
8. ներազգային կենսագործունեության միջավայրի ձևավորումը,
9. Ազգերի լիզայի կողմից հայերի «անհող/անհայրենիք պետության» ճանաչումը:

Ձարգացնելով Ն. Աղբալյանի տեսակետը՝ Վ. Նավասարդյանը կարծում էր, որ «հայրենիքը չէ բացառաբար, որ հիմ պիտի դառնա որևէ հավաքականության ամբող-

<sup>1</sup> «Պատմագրություն Հայ Յեղափոխական Ղազնակցության», քառահատոր շարք, հ. Դ, Ե., 2003, էջ 323:

<sup>2</sup> Նաւասարդեան Վ., Ղազնակցութեան քաղաքական ուղին, Կահիրէ, 1925, էջ 83:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 305-340:

<sup>4</sup> «Յուսաբեր», Կահիրէ, 22.01.1924:



ջացման, պահպանման և իրավական գոյության»։ «Հայրենիք» ասելով՝ նա նկատի ուներ հայրենի տարածքը, ուստի հիմնական գաղափարը այդ տարածքից դուրս ապատարածքային սկզբունքով համախմբվելու հնարավորությունն էր, քանի որ համախմբման համար հենքային նշանակություն ունի «ազգությունը, որ իր շուրջն է համախմբում բոլոր նրանց, որոնք միևնույն ազգի պատկանելության զգացումը ունեն»<sup>1</sup>։

Այս հայեցակետը ողջ Սփյուռքում տարածելու համար ՀՅԴ-ն փորձեց կազմակերպել համասփյուռքյան համագումար՝ հրավիրելով նաև ՍԴՀԿ և ՌԱԿ ներկայացուցիչներին։ Վերջիններս թեև սկզբում համաձայնեցին<sup>2</sup>, սակայն հետո հրաժարվեցին համագումարին մասնակցելուց<sup>3</sup>։

Սփյուռքի տարբեր հատվածներին կազմակերպվածություն հաղորդելու գործունեություն իրականացվում էր նաև մյուս հայ ազդեցիկ կազմակերպությունների կողմից՝ ձևավորելով կրթամշակութային, երիտասարդական և այլ կառույցներ։ Հայկական կազմակերպությունների արդյունավետ գործունեության արդյունքում Սփյուռքի առավել նշանակալի համայնքերում ազգային կազմակերպությունների շուրջ ձևավորվեցին ներազգային կենսագործունեության միջավայրեր՝ համայնքային կառույցների ցանցային համակարգերով։ Գործունեության համայնքային ձևաչափը այդ միջավայրերի գործունեությունն աստիճանաբար միահյուսեց համազգային օրակարգի շուրջ։

Ներազգային կենսագործունեության միջավայրերը բռնեցին պատմության քննությունը և ներկայումս էլ իրականացնում են իրենց պատմական առաքելությունը։

## **2. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ԵՎ ԼԻՐԱՆԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ**

Հայկական Սփյուռքի կազմակերպական կառուցվածքը լավագույնս ընկալելու համար առաջին հերթին հարկ է քննության առնել հայկական իրականության մեջ խիստ գործածական «Սփյուռքահայ կազմակերպություն» հասկացությունը։ Դրանք Սփյուռքում գործունեություն իրականացնող տարբեր բնույթի կազմակերպությունները, կառույցներն ու միություններն են, որոնք, ընդհանուր առմամբ, բաժանվում են երկու խմբի։

1. *Սփյուռքահայ կազմակերպություն*։ Սփյուռքում գործող քաղաքական, հասարակական, մշակութային, կրթական կամ այլ բնույթի կազմակերպություն կամ կառույց, որի գործունեության շրջանակը կարող է ընդգրկել՝

- առանձին համայնքը,
- ամբողջ Սփյուռքը։

Սփյուռքահայ կազմակերպությունների գործունեությունը վերաբերում է հայության «կարիքավոր» խմբերին։ Նման կազմակերպությունները, գործունեության տարածական սահմաններն ընդարձակելու անհրաժեշտությունից ելնելով, ստեղծում են ուղեկից բնագավառային կառույցներ, որտեղ և որոնց գործունեության շրջանակներն ընդգրկվում են հայության նորանոր հատվածներ։

Սփյուռքահայ կազմակերպությունները, ըստ գործունեության բնագավառների, բաժանվում են հետևյալ խմբերի՝

- ա) հոգևոր կազմակերպություններ,
- բ) համայնքային կազմակերպություններ,
- գ) հասարակական-քաղաքական կազմակերպություններ,
- դ) բարեգործական կազմակերպություններ,
- ե) մշակութային կազմակերպություններ,
- զ) կրթական կազմակերպություններ,
- է) հայագիտական կենտրոններ,
- ը) կանանց կազմակերպություններ,
- թ) երիտասարդական կազմակերպություններ,

<sup>1</sup> Նաուսարդեան Վ., Նույն տեղում, էջ 86-87։

<sup>2</sup> «Յուսաբեր», Կահիրե, 11.07.1925։

<sup>3</sup> Նաուսարդեան Վ., նշվ. աշխ., էջ 96։

- ժ) հայրենակցական միություններ,
- ժա) լրատվական կազմակերպություններ,
- այլ կազմակերպություններ:

2. *Սփյուռքահայ համայնք*: Այստեղ գործունեություն են իրականացնում տարբեր կազմակերպություններ, կառույցներ և միություններ: Այս կազմակերպական միավորն ընդգրկում է առանձին վերցրած մեկ հայկական համայնքը, որտեղ հայությունը կարգավորում է իր ներքին կյանքը, ստեղծում կրթական, մշակութային և այլ բնույթի հաստատություններ: Սփյուռքահայ համայնքն իրենից ներկայացնում է Սփյուռքի բջիջը, որին, ընդհանուր առմամբ, հատուկ են նույն նպատակներն ու խնդիրները, ինչ մյուս համայնքներին:

3. *Համասփյուռքյան կազմակերպություն*: Եթե ընդհանուր առմամբ փորձենք բնորոշել համասփյուռքյան բնույթի կազմակերպությունը, ապա պետք է շեշտադրումը կատարենք կամ կազմակերպության տարածման աշխարհագրության և կամ գործունեության աշխարհագրության վրա: Ուստի ընդհանրական ստորաբաժանումը կունենա հետևյալ տեսքը.

1. կազմակերպություններ, որոնց կազմակերպական կառույցը տարածված է ողջ Սփյուռքում,

2. կազմակերպություններ, որոնց գործունեությունն առնչվում է ամբողջ Սփյուռքին:

Այսպիսով՝ համահայկական կազմակերպություններն առաջին հերթին հայ ազգային կուսակցություններն են ու ՀԲԸՄ-ն՝ իրենց շուրջ կամ կից ձևավորված բնագավառային կառույցների համահայկական ցանցով:

Մյուս կողմից՝ նշված հայեցակետից հնարավոր է դառնում համասփյուռքյան ձևաչափից դիտարկելու նաև համայն հայության շահերից բխող գործունեություն իրականացնող, սակայն կառույցային իմաստով տեղական (լոկալ) կազմակերպությունները, ինչպիսիք են հիմնադրամները, լրատվամիջոցները և որոշ հասարակական, գիտակրթական և քաղաքական կառույցներ (օր.՝ Հայկազյան համալսարան, Ամերիկայի հայկական համագումար և այլն):

Նշված հայեցակարգի առումով անդրադառնալով Լիբանանի հայ համայնքին՝ կարող ենք մատնանշել, որ նշվածը խտացված կերպով իր արտահայտությունն է գտել Լիբանանում:

Լիբանանի հայ համայնքի կառուցվածքը լավագույնս ներկայացնելու համար այն պետք է դիտարկել վերոբերյալ երկու ձևաչափերով:

1. *Համասփյուռքյան ձևաչափ*: Այս առումով Լիբանանի հայ համայնքն իրենից ներկայացնում է Սփյուռքի կազմակերպական կառուցվածքի խտացված կամ տեղայնացված՝ «մոդելային» տարբերակը: Ավելորդ ենք համարում մեկ անգամ ևս թվարկելու այնտեղ գործող բոլոր կազմակերպությունները, միայն հարկավոր է նշել, որ այստեղ ամբողջ ծավալով գործում են հայ քաղաքական կազմակերպությունները (կուսակցություններ)՝ իրենց շուրջ ձևավորված բնագավառային (կրթական, մշակութային, երիտասարդական, բարեգործական, լրատվական և այլն) կազմակերպական ցանցերով: Լիբանանում նշանակալի է նաև Հայկական բարեգործական ընդհանուր միության գործունեությունը: Այնտեղ գործում են նաև համահայկական հոգևոր կառույցները, իսկ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության կենտրոնը Բեյրութում խոսում է Լիբանանի՝ հայկական հոգևոր կենտրոն հանդիսանալու իրողության մասին: Բեյրութում է գտնվում Հայկազյան համալսարանը, որը ինքնին փաստում է Լիբանանի հայ համայնքի խիստ կայացածության մասին: Լիբանանի հայության շրջանում զգալի է նաև հայրենակցական կազմակերպությունների դերը<sup>1</sup>: Առանձին համայնքի առումով սա ներազգային կենսագործունեության միջավայրի լավագույն օրինակ է:

<sup>1</sup> Տե՛ս Տազետան Ա., Լիբանանի հայօճախը, գիրք Ա., Համարկումին խաչուղիները (1920-2005), Պէյրութ, 2015, էջ 42-63:



Սակայն ներազգային կենսագործունեության միջավայրից բացի անհրաժեշտ է հիշատակել նաև արտաքին (օտար) միջավայրում համայնքի ներգրավվածության մասին: Խնդիրն այն է, որ այստեղ ստեղծված են զգալի հնարավորություններ՝ համազգային խնդիրների լուծման հարցերով զբաղվելու համար: Մյուս կողմից, Լիբանանի հայ համայնքը էական դեր ունի ՀՀ-Լիբանան հարաբերություններում<sup>1</sup>:

2. *Տեղային ձևաչափ:* Այս ձևաչափում հարկ է քննարկել բացառապես տեղային՝ համայնքային դրսևորումները, որոնք, ճիշտ է, մեծապես ածանցվում են համահայկական ձևաչափից, սակայն ունեն ուրույն դիմագիծ: Առաջին և կարևոր տեղային դրսևորումը հայկական կազմակերպությունների ինտեգրվածությունն է Լիբանանի պետական համակարգում: Հանդիսանալով Լիբանանի մեծագույն յոթ համայնքներից մեկը՝ Լիբանանահայությունը սահմանադրականորեն ներկայացված է պետության գործադիր և օրենսդիր իշխանության մարմիններում՝ հնարավորություն ստանալով ուղղակիորեն զբաղվելու սեփական (հայկական) շահերի պաշտպանությամբ: Զգալի ներուժի առկայությունը և օրենսդրական դաշտը հայությանը հնարավորություն են տալիս նաև հաջողություններ արձանագրելու տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում:

Մյուս կողմից՝ զարկ է տրվում ներհայկական կենսագործունեության միջավայրի զարգացմանը, որն առանց այն էլ արդյունավետ գործունեության տասնամյակների փորձառությամբ է օժտված: Մասնավորապես, ներազգային կենսագործունեության միջավայրի կայացածության մասին են վկայում մեծաթիվ հայկական դպրոցների, վարժարանների, ինչպես նաև Հայկազյան համալսարանի, մշակութային կառույցների ու ակումբների, երիտասարդական ու պատանեկան միությունների, եկեղեցիների, լրատվամիջոցների և հայապահպանության այլ կարևոր բաղադրիչ-ինստիտուտների առկայությունը:

Ի դեպ, հայության ներքին բաժանումը դավանական (առաքելական, կաթոլիկ, ավետարանական) և կամ գաղափարաբանական (ՍԴՀԿ, ՀՅԴ և ՌԱԿ շրջանակներ) սկզբունքով գրեթե ազդեցություն չի թողնում ներազգային կենսագործունեության միջավայրի վրա, այլ ավելի է հարստացնում նրա բովանդակությունը:

Ամփոփելով արդեն ասվածը՝ նշենք, որ Լիբանանում ձևավորվել է կայուն և զարգացող հայկական ներազգային կենսագործունեության միջավայր, որը, ընդհանուր առմամբ, բացառիկ երևույթ է հայ իրականության մեջ:

Վերը համոզվեցինք, որ Լիբանանի հայ համայնքը կազմակերպական վիճակով և կայացածությամբ լավագույններից մեկն է Սփյուռքում: Սակայն միայն արդյունավետ կազմակերպական վիճակը սոսկ մասնակիորեն է հնարավորություն տալիս այն որպես համայնքային մոդել Սփյուռքի այլ համայնքներին ներկայացնելու համար:

Արդի սփյուռքագիտությունը առավել կայացած սփյուռքներին վերագրում է «գործառույթներ»<sup>2</sup>, որոնց առկայությունը հայկական Սփյուռքում հնարավորություն է տալիս վերջինս համարելու արդի ամենակայացած սփյուռքներից մեկը: Այդ գործառույթներն են.

1. ինքնության պահպանման միջավայրի ձևավորումը<sup>3</sup>,
2. համայնքային ինստիտուտների (ցանցային) առկայությունը<sup>4</sup>,
3. ազգային խնդիրներին հետամուտ լինելը<sup>5</sup>,
4. կապը հայրենիքի (հայրենի պետության) հետ<sup>1</sup>,

<sup>1</sup> «Լիբանանահայ համայնք», տե՛ս ՀՀ ԱԳՆ պաշտոնական կայքը. <http://lebanon.mfa.am/hy/community-overview/>

<sup>2</sup> Այդ գործառույթների մասին մանրամասնորեն տե՛ս Butler K., Defining Diaspora, refining a discourse. «Diaspora»: A Journal of Transnational Studies, 2001, vol. 10, N 2, pp. 194-211; Sheffer G. (2003).

<sup>3</sup> Safran W., Recent French Conceptualizations of Diaspora, «Diaspora»: A Journal of Transnational Studies, 2003, vol. 12, N 3, pp. 437-441; Sheffer G., Diaspora Politics: At Home Abroad, Cambridge, 2003, pp. 173-179.

<sup>4</sup> Tölölyan Kh., The nation-state and its others: In lieu of a preface, «Diaspora»: A Journal of Transnational Studies, 1991, vol. 1, N 1, pp. 3-7; Brubaker R., The "Diaspora" Diaspora. «Ethnic and Racial Studies», 2005, vol. 28, N 1, pp. 1-19; Vertovec S., Three Meanings of "Diaspora": Exemplified Among South Asian Religions, «Diaspora»: A Journal of Transnational Studies, 1997, vol. 6, N 3, pp. 277-299; Sheffer G., նշվ. աշխ., էջ 180-201:

<sup>5</sup> Sheffer G., նշվ. աշխ., էջ 202-215; Vertovec S., նշվ. աշխ.:

5. հայրենի պետության և քաղաքացիության պետության միջև կամրջող դերի ստանձնումը<sup>2</sup>,

6. այլ երկրներում գտնվող հայրենակից համայնքների հետ կապի պահպանումը<sup>3</sup>,

7. ինտեգրվածությունը քաղաքացիության պետության մեջ<sup>4</sup>:

Լիբանանի հայ համայնքի քննարկումը նշված հայեցակարգային գործառույթների համատեքստում՝ վերն ասվածի լույսով ցույց է տալիս, որ այն ամբողջովին համապատասխանում է «մոդելային համայնք»-ի չափանիշներին: Դրանց մեջ, ի դեպ, հատուկ շեշտված է քաղաքական գործառույթը:

Սփյուռքահայ իրականության մեջ շատ չեն նման համայնքները: Դրանց թվում հարկ է հիշատակել Իրանի և Սիրիայի հայ համայնքները: Վերջինս այսօր, նույնիսկ գտնվելով դժվարին իրավիճակում, նշված հատկանիշների հիման վրա շարունակում է գոյատևել:

Սփյուռքի ամենածանրակշիռ ու կարևոր համայնքներից են ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և ՌԴ-ի համայնքները: Վերջիններս հիմնականում միայն մասամբ են համապատասխանում նշված չափանիշներին: Մասնավորապես, կարևորվում է դրանց հասարակական-քաղաքական կշիռը, մինչդեռ ներազգային կենսագործունեության միջավայրը ընդհանրական-ամբողջական չէ:

Առավել ևս ասվածը վերաբերում է հետխորհրդային տարածքի հայ համայնքներին, որտեղ դեռևս ընթանում է «սփյուռքացման» գործընթացը՝ հիմնականում տարերայնորեն և գրեթե առանց համակարգման:

### 3. ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՄԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ՀԱՄԱԿԵՑԱԿԱՆ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Ռուսաստանի Դաշնությունը պատկանում է այն պետությունների թվին, որոնք կարելի է կոչել բառի բուն իմաստով բազմազգ պետություն: Այնտեղ բնակվում են 80-ից ավելի ազգությունների ներկայացուցիչներ: Նրանց պայմանականորեն կարելի է բաժանել երկու մեծ խմբերի.

1. բնիկ ժողովուրդներ, որոնք պատմականորեն ձևավորվել են ՌԴ տարածքում և կամ ապրել այնտեղ երկար ժամանակ,

2. ազգային խմբեր, որոնց «մայր» հատվածը բնակվում է ՌԴ-ից դուրս և կամ ՌԴ-ից դուրս ունեն իրենց պետությունները<sup>5</sup>:

ՌԴ-ում ազգային փոքրամասնությունների մեջ ներառված ազգություններից 23-ը պետություն ունեցող ազգեր են (հայեր, հույներ, գերմանացիներ, լատիշներ, ղազախներ և այլն), իսկ 65-ը՝ ՌԴ բնիկ փոքրաթիվ ժողովուրդները<sup>6</sup>:

Փաստորեն հայերը ՌԴ-ում ներկայումս հանդես են գալիս երկու խմբային կարգավիճակով.

1. վաղուց ի վեր ՌԴ-ի տարածքում հայտնված հայեր, որոնք սերունդներով ապրել են այնտեղ, սակայն համախմբված են և ունեն համայնքային ինստիտուտներ,

2. երրորդ պետությունից ՌԴ տեղափոխված հայեր (հիմնականում հանձնա-հայեր Աբխազիայից, Բաքվի, Ջավախքի և հայության այլ խմբեր), որոնք դարձյալ ապրում են խմբային կյանքով, ունեն սոցիալական կառույցներ, սակայն սփյուռքին բնորոշ

<sup>1</sup> Sheffer G., Transnationalism and Ethnonational Diasporism, «Diaspora»: A Journal of Transnational Studies, 2006, vol. 15, N 1, pp. 121-145; Safran W., նշվ. աշխ.:

<sup>2</sup> Sheffer G., Diaspora Politics: At Home Abroad, pp. 28-29, 202-219; Rios M., Adiv N., Geographies of Diaspora: A Review, UC Davis Center for Regional Change, 2010.

<sup>3</sup> Butler K., նշվ. աշխ., Vertovec S., նշվ. աշխ.:

<sup>4</sup> Sheffer G., Diaspora Politics: At Home Abroad, p. 100.

<sup>5</sup> Ст'у «Доклад Российской Федерации о выполнении положений Рамочной конвенции о защите национальных меньшинств», [http://www.coe.int/t/dghl/monitoring/minorities/3\\_FCNMdocs/PDF Ist\\_SR\\_RussianFederation\\_ru.pdf](http://www.coe.int/t/dghl/monitoring/minorities/3_FCNMdocs/PDF Ist_SR_RussianFederation_ru.pdf), с. 11-13.

<sup>6</sup> Ст'у նույն տեղում, էջ 3:

քաղաքական գործառույթներ չեն իրականացնում, այլ հիմնական շեշտադրումը կատարում են ինքնության պահպանության վրա: Այս խմբում ընդգրկվում են Հայաստանի քաղաքական անկախության ձևավորումից հետո ՀՀ-ից ՌԴ մեկնած հայերը<sup>1</sup>: Վերջիններս ՌԴ-ում բնակվում են բավականին երկար, ադապտացվել են, ստացել քաղաքացիություն և նրանց՝ որպես էթնիկ խմբի, հիմնական «առաքելությունը» դարձել է ինքնության պահպանությունը:

Խորհրդային շրջանում ՌԴ հայությունն իրեն որպես սփյուռք չէր ընկալում այն պատճառով, որ հայության հայրենաբնակ հատվածի հետ միասին հանդիսանում էր մեկ պետության՝ ԽՍՀՄ-ի քաղաքացի: Ամեն ինչ փոխվեց ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, երբ ՌԴ հայությունը կանգնեց համայնքային միավորներ ձևավորելու անհրաժեշտության առաջ: Հայության սփյուռքացման գործընթացը, ավելի որոշակի՝ համայնքային ինստիտուտների ձևավորումը ՌԴ-ում ընթացավ տեղական (հայաշատ բնակավայրերում) համայնքային մարմինների ստեղծման ճանապարհով:

ՌԴ հայության ինքնակազմակերպման հիմնահարցերին և մասնավորապես ներազգային կենսագործունեության միջավայրերի ձևավորմանն առավել խորությամբ ծանոթանալու համար հարկ է անդրադառնալ ՌԴ օրենսդրության մեջ ազգային փոքրամասնությունների համար նախատեսված իրավունքներին:

ՌԴ սահմանադրության 71 և 72-րդ հոդվածները մասամբ վերաբերում են ազգային փոքրամասնությունների իրավունքներին<sup>2</sup>: Այդտեղ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը համարում է ինչպես դաշնային, այնպես էլ դաշնային ու շրջանային (մարզային) համատեղ իրավագործության օբյեկտ (հոդված 72)<sup>3</sup>: 2-րդ հոդվածում սահմանվում է բոլորի՝ մայրենի լեզուն օգտագործելու իրավունքը՝ ներառյալ շփումը, դաստիարակությունը, կրթությունը և ստեղծագործելը<sup>4</sup>:

«Մշակույթի մասին ՌԴ օրենսդրության հիմունքներում» (21-րդ հոդված) սահմանված է, որ ինքնության իրացման նպատակով ազգային հանրույթներն իրավունք ունեն ստեղծել մշակութային-ազգային ինքնավարություններ, ազգային կենտրոններ, ընկերակցություններ և հայրենակցական միություններ<sup>5</sup>: Սահմանված է նաև, որ ՌԴ-ն ապահովում է իրենց ազգային-պետական կազմավորումներից դուրս բնակվող կամ իրենց պետականությունը չունեցող, համախումբ բնակվող բոլոր էթնիկական համայնքների՝ մշակութային-ազգային ինքնավարություն ունենալու իրավունքը<sup>6</sup>:

«ՌԴ ժողովուրդների լեզուների մասին» ՌԴ օրենքով ՌԴ քաղաքացիները կրթության լեզվի (այդ թվում՝ մայրենի լեզվի) ազատ ընտրության իրավունք ունեն<sup>7</sup>:

Նշվածն իր արտացոլումը գտավ 1996 թ. ընդունված «Ազգային-մշակութային ինքնավարության մասին» ՌԴ օրենքում. «Ազգային-մշակութային ինքնավարություն ՌԴ-ում ազգային-մշակութային ինքնորոշման ձև է, որն իրենից ներկայացնում է իրենց որոշակի էթնիկական հանրույթի մաս համարող և համապատասխան տարածքի վրա ազգային փոքրամասնության կարգավիճակում գտնվող ՌԴ քաղաքացիների միավորում՝ կամավոր ինքնակազմակերպման հիման վրա և ինքնության, լեզվի զարգացման, կրթության, ազգային մշակույթի պահպանության հարցերը ինքնուրույն լուծելու նպատակով: Ազգային-մշակութային ինքնավարությունը հասարակական միա-

<sup>1</sup> Тавадян Т., Смешанные браки армян Краснодарского края: причины, следствия и влияние на национальную идентичность, «Հայ ինքնության որակների պահպանումը խառնամուսնություններում» գիտագործնական համաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., 2010, էջ 67-74; Арутюнян В., Сохранение армянской идентичности в условиях межнациональных браков на Юге России, «Հայ ինքնության որակների պահպանումը խառնամուսնություններում» գիտագործնական համաժողովի զեկուցումների ժողովածու, էջ 75-80: Տե՛ս նաև Կարապետյան Ռ., Միգրացիան և հայկական նոր սփյուռքը. էթնոսոցիոլոգիական հետազոտություն, Ե., 2013:

<sup>2</sup> Տե՛ս «Конституция Российской Федерации», <http://www.constitution.ru/10003000/10003000-5.htm>

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>5</sup> Տե՛ս «Основы законодательства Российской Федерации о культуре», Официальный сайт Министерства культуры РФ, <http://mkrf.ru/dokumenty/581/detail.php?ID=61217>

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>7</sup> Տե՛ս «Закон «О языках народов Российской Федерации»», <http://docs.cntd.ru/document/9003298>.

վորման ձև է: Ազգային-մշակութային ինքնավարության կազմակերպարավական ձևաչափը հասարակական կազմակերպությունն է»<sup>1</sup>:

Փաստորեն մշակույթին առնչվող օրենսդրությամբ համապատասխան էթնիկական հանրույթն ազգային կենտրոններ ու միություններ ստեղծելու իրավունք է ստանում, իսկ «Ազգային մշակութային ինքնավարության մասին» ՌԴ օրենքով՝ հասարակական կազմակերպություն, այսինքն՝ էթնիկ հիմունքներով ոչ կառավարական կազմակերպություն: Ուստի՝ հասարակական կազմակերպության տրամաբանությամբ՝ այն հիմնված է ֆիզիկական անձանց անդամության վրա:

Առաջին պարագայում մշակութային-ազգային ինքնավարությունը վերտարածքային հումանիտար բնույթի երևույթ է, մինչդեռ ազգային-մշակութային ինքնավարությունը տարածք նախատեսող հասկացություն է և լինում է դաշնային, տարածաշրջանային և տեղական բնույթի: Պետք է հիշել, որ ըստ օրենքի՝ «ազգային-մշակութային ինքնավարություն ունենալու իրավունքը չի հանդիսանում ազգային-տարածքային ինքնորոշման իրավունք»<sup>2</sup>:

Ի դեպ, ռուսական վերլուծական հանրույթի շրջանում կա բանավեճ ազգային-մշակութային ինքնավարության բնույթի մասին: Մի մասը պնդում է, որ նման ինքնավարության իրավունք ունեն ռուսաստանյան բոլոր ազգերն ու ազգությունները՝ անկախ մեծ կամ փոքր լինելուց<sup>3</sup>, իսկ այլք պնդում են, որ ազգային-մշակութային ինքնավարությունը «փոքրամասնությունների ինստիտուտ է: Փոքրամասնությունները դրանք ժողովրդագրական, մշակութային և քաղաքական առումներով ոչ դոմինանտ բոլոր ժողովուրդներն են»<sup>4</sup>:

Քանի որ ազգային-մշակութային ինքնավարությունները հասարակական կազմակերպություններ են, իրավունք չունեն զբաղվելու քաղաքական գործունեությամբ: Հասարակական-քաղաքական կյանքին մասնակցելու միակ հնարավոր ձևը զանգվածային լրատվամիջոցներ ստեղծելն է, որը «Ազգային-մշակութային ինքնավարությունների մասին» ՌԴ օրենքով թույլատրվում է<sup>5</sup>:

Օրենքի հիման վրա ներկայումս ՌԴ-ում գրանցված են 60 ազգությունների դաշնային, տարածաշրջանային և տեղական հարյուրավոր ազգային-մշակութային ինքնավարություններ<sup>6</sup>:

Փաստորեն ազգային-մշակութային ինքնավարության անդամ կարող են լինել միայն ազգային փոքրամասնության կարգավիճակում գտնվող ՌԴ քաղաքացիները, որոնք «ինքնորոշվել» են՝ իրենց համարելով առանձին էթնիկ հանրույթի անդամ: Նրանց միավորումը տեղի է ունենում ՌԴ ամբողջ տարածքում կամ դրա մի հատվածում, որտեղ ապրում են այդ համայնքի այլ ներկայացուցիչներ և:

Ազգային-մշակութային ինքնավարությունները ՌԴ-ում օժտված են ազգային ինքնության պահպանման, մայրենի լեզվի ու ազգային մշակույթի զարգացման համար պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմիններից անհրաժեշտ աջակցություն ստանալու, ազգային-մշակութային շահերը երկրի օրենսդիր և գործադիր իշխանության մարմիններին ու տեղական ինքնակառավարման մարմիններին ներկայացնելու, մայրենի լեզվով զանգվածային լրատվական միջոցներ ստեղծելու, տեղեկատվություն ստանալ-փոխանցելու, պատմական ու մշակութային ժառանգությունը պահպանելու, հարստացնելու, ազգային ավանդույթներին ու սովորույթներին հետևելու,

<sup>1</sup> Федеральный закон РФ «О национально-культурной автономии», <http://pravo.gov.ru/proxy/ips/?docbody=&prevDoc=102084053&backlink=1&nd=102041937>

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> St`u Крылов Б., Комментарий к Федеральному закону «О национально-культурной автономии», М., 1997, с. 8.

<sup>4</sup> St`u Тишков В., Закон принят-дело за его реализацией, Национально-культурная автономия: проблемы и суждения, матер. заседаний круглого стола, М., 1998, с. 14.

<sup>5</sup> St`u Федеральный закон РФ «О национально-культурной автономии», <http://pravo.gov.ru/proxy/ips/?docbody=&prevDoc=102084053&backlink=1&nd=102041937>

<sup>6</sup> St`u Максимова О., Федеральный закон «О национально-культурной автономии» в правовом поле этнонациональной политики, «Известия» Оренбургского государственного аграрного университета, 2012, № 1, с. 267-269.

մասնավոր կրթական և գիտական կազմակերպություններ, մշակույթի հիմնարկներ ստեղծելու իրավունքներով<sup>1</sup>:

Ինչպես տեսնում ենք, ազգային-մշակութային ինքնավարության իրավունքները հիմնականում մշակութային-կրթական են և օրենքը հստակորեն այդ ինքնավարության սահմանները սահմանափակում է: Հիմնականը ազգային լեզվի պահպանությունն է:

Օրենքը նախատեսում է ազգային-մշակութային ինքնավարության երեք աստիճանական մակարդակ՝ տեղական, տարածաշրջանային և դաշնային: Ամենակարևոր օղակը տեղական ազգային-մշակութային ինքնավարությունն է, առանց որի չի կարող ստեղծվել տարածաշրջանային ազգային-մշակութային ինքնավարություն, իսկ առանց առաջին երկուսի առկայության՝ չի կարող հիմնադրվել դաշնային ազգային-մշակութային ինքնավարություն: Ի դեպ, ազգային-մշակութային ինքնավարության բոլոր մակարդակներում էլ միավորվում են ՌԴ քաղաքացի այս կամ այն էթնիկական հանրույթի անդամները: ՌԴ քաղաքացի չհանդիսացողները ազգային-մշակութային ինքնավարության անդամ լինել չեն կարող<sup>2</sup>:

Պետք է նշել, որ «Ազգային-մշակութային ինքնավարության մասին» ՌԴ օրենք վերոհիշյալ դրույթները ունեցել են նաև մեկնաբանման խնդիր, քանի որ ոչ միշտ են նրանում ամրագրված դրույթները միանշանակ: Խնդիրներից մեկն այն էր, թե ՌԴ մեկ սուբյեկտում միևնույն ազգության քաղաքացիների քանի տարածաշրջանային ազգային-մշակութային ինքնավարություն կարող է ստեղծվել: Ի վերջո ՌԴ գերագույն դատարանի քաղաքացիական հարցերով դատական կոլեգիան 1999 թ. սահմանեց, որ ՌԴ սուբյեկտում կարող է ստեղծվել մեկ ազգության քաղաքացիների միայն մեկ տարածաշրջանային ազգային-մշակութային ինքնավարություն: 2004 թ. նույն որոշմանը հանգեց նաև ՌԴ սահմանադրական դատարանը, ըստ որի՝ ՌԴ մեկ սուբյեկտում միևնույն ազգությանը պատկանող ՌԴ քաղաքացիների տեղական ազգային-մշակութային ինքնավարությունների կողմից կարող է ստեղծվել մեկից ոչ ավելի տարածաշրջանային ազգային-մշակութային ինքնավարություն: Ըստ այդմ, նույն ազգության այն ներկայացուցիչները, որոնք անդամ չեն նշված տեղական ազգային-մշակութային ինքնավարություններին, փաստացիորեն զրկվում են իրենց օրինական իրավունքից՝ ունենալու ազգային-մշակութային ինքնավարություն<sup>3</sup>:

ՌԴ-ն ապահովում է նաև ազգային փոքրամասնությունների իրավունքը՝ մայրենի լեզվով շփման, դաստիարակության և կրթություն ստանալու ասպարեզներում: Նրանք ունեն նաև մայրենի լեզվի պահպանության և զարգացման, նրանով հիմնական ընդհանուր կրթություն ու դաստիարակություն ստանալու իրավունք՝ հիմնելով մայրենիով ուսուցման մասնավոր նախադպրոցական ուսումնական կառույցներ, հանրակրթական կազմակերպություններ, արհեստավարժական ուսումնական հաստատություններ և բարձրագույն կրթության մասնավոր ուսումնական հաստատություններ<sup>4</sup>:

Փաստորեն, ազգային-մշակութային ինքնավարությունները կարող են հիմնել մասնավոր բնույթի ամենատարբեր ուսումնական հաստատություններ, ինչպես նաև հրատարակել ուսումնական գրականություն և զբաղվել մանկավարժական կադրերի պատրաստման աշխատանքներով՝ ընդհուպ մինչև օտարերկրյա պետությունում կազմակերպելով մանկավարժների պատրաստման և վերապատրաստման դասընթացներ, ձեռք բերելով ուսումնական նյութ:

Սահմանված են ազգային-մշակութային ինքնավարությունների իրավունքները ազգային մշակույթի պահպանման և զարգացման ապահովման հարցերում: Ազգային-մշակութային ինքնավարություններն իրավունք են ստանում ստեղծել ազգային մշակույթի ոչ պետական (հասարակական) հիմնարկներ՝ թատրոններ, մշակութային

<sup>1</sup> Տե՛ս «Федеральный закон РФ “О национально-культурной автономии», <http://pravo.gov.ru/proxy/ips/?docbody=&prevDoc=102084053&backlink=1&&nd=102041937>

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>3</sup> Տե՛ս Скатулина Е., Овчинников В., Национальные меньшинства и право на национально-культурную автономию, “Известия высших учебных заведений” Поволжского региона, Общественные науки, № 4, 2009, с. 24-25.

<sup>4</sup> Տե՛ս «Федеральный закон РФ “О национально-культурной автономии», <http://pravo.gov.ru/proxy/ips/?docbody=&prevDoc=102084053&backlink=1&&nd=102041937>



կենտրոններ, թանգարաններ, գրադարաններ, ակումբներ, ստուդիաներ, արխիվներ և մշակույթի այլ հիմնարկներ, կազմակերպել ստեղծագործական միություններ, արհեստավարժ և ինքնագործ արվեստի խմբեր, ազգային մշակութային ժառանգության, ազգային մշակույթի ձեռքբերումների ուսուցման խմբակներ, ազգային մշակույթի բնագավառում իրականացնել մասսայական միջոցառումներ՝ փառատոններ, մրցույթներ, դիտումներ, ցուցահանդեսներ և այլ միջոցառումներ, հրատարակել պատմական, գեղարվեստական, երաժշտական, ֆոլկլորային, ազգագրական գրականության ստեղծագործություններ ազգային (մայրենի) և այլ լեզուներով<sup>1</sup>:

Կարելի է արձանագրել, որ «Ազգային-մշակութային ինքնավարության մասին» ՌԴ օրենքը լայն իրավունքներ է նախատեսում համապատասխան ինքնավարությունների համար՝ ազգային ինքնության և դրա բաղադրիչների՝ լեզվի ու մշակույթի պահպանման հարցում, ինչպես նաև ազգային լեզվով ազգային ուսումնական հիմնարկներում կրթություն ստանալու առումով: Սակայն նման լայն իրավունքների իրացումն առաջին հերթին նախատեսում է մեծ ֆինանսական միջոցների առկայություն: Ուստի պատահական չէ, որ գրեթե միշտ ազգային-մշակութային ինքնավարության ինստիտուտի՝ ոչ լիարժեք կայանալու պատճառ, ինչպես կտեսնենք, համարվել է հենց ֆինանսների սղությունը կամ բացակայությունը:

Քանի որ «Ազգային-մշակութային ինքնավարության մասին» ՌԴ օրենքը ազգային փոքրամասնություններին ներազգային կենսագործունեության միջավայրեր ձևավորելու հնարավորություն է տալիս, դրա ընդունումից հետո ՌԴ-ում ստեղծվել են հայկական մի քանի տասնյակ տեղական, շուրջ մեկ տասնյակ տարածաշրջանային և երկու դաշնային ազգային-մշակութային ինքնավարություններ: Այսօր ՌԴ արդարադատության նախարարության տեղեկատվական հանգույցում հայկական ազգային-մշակութային ինքնավարությունների փնտրտուքը բերում է 88 ազգային-մշակութային ինքնավարության անվանում: Դրանցից 2-ը համառուսաստանյան են, որոնցից մեկը փակվել է 2002 թ. (գրանցված էր Մոսկվայում), իսկ մյուսը գրանցվել է 2013 թ. (գրանցված է Իվանովո քաղաքում): Մնացյալից 16-ը տարածաշրջանային են (Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ, Կալինինգրադ, Կրասնոյարսկ, Կոստրոմա, Ղրիմ, Ստավրոպոլ, Սամարա, Ռոստով, Սևաստոպոլ, Իվանովո, Տվեր, Նովոսիբիրսկ, Թաթարստան, Կարելիա), իսկ 70-ը՝ տեղական (բոլոր հայաշատ քաղաքներում և շրջաններում): Նշվածներից ներկայումս չեն գործում 1 համառուսաստանյան, 2 տարածաշրջանային և 13 տեղական հայկական ազգային-մշակութային ինքնավարություններ<sup>2</sup>:

Փաստորեն ՌԴ հայությունը սկզբում շարժվեց «Ազգային-մշակութային ինքնավարության մասին» ՌԴ օրենքի դրույթներին համապատասխան ազգային-մշակութային ինքնավարությունների ձևավորման ուղիով՝ արձանագրելով զգալի հաջողությունների թե՛ քանակապես և թե՛ որակապես: Այդ իրողությունն ակնհայտ է դառնում ՌԴ պետական դրամայում 2010 թ. կազմակերպված կլոր սեղան-քննարկումից<sup>3</sup>: Կազմակերպիչների մտահոգությունն այն էր, որ ՌԴ կյանքի շատ հասարակական բնագավառներ քաղաքականացվել են և դրանց թվում նաև՝ փոքրամասնությունների կյանքը: Այդ պահի դրությամբ ՌԴ-ում գրանցված էր 16 դաշնային, 221 տարածաշրջանային և 592 տեղական ազգային-մշակութային ինքնավարություններ, ընդհանուր առմամբ՝ 829-ը:

Արձանագրվեցին նաև առկա կազմակերպական բնույթի խնդիրներ: Մասնավորապես միևնույն ազգի ներկայացուցիչների շրջանում հաճախ ստեղծվում են մրցակցող ազգային-մշակութային ինքնավարություններ:

Քննարկման ժամանակ մատնացույց արվեց այն իրողությունը, որ չնայած «Ազգային-մշակութային ինքնավարության մասին» ՌԴ օրենքի ընդունման ժամանակ բոլորին թվում էր, թե օրենքի ընդունմամբ ազգային ընկերակցություններն ու միություն-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>2</sup> «О деятельности некоммерческих организаций, Информационный портал Министерства юстиции Российской Федерации, Информация о национально-культурных автономиях», <http://unro.minjust.ru/NKAs.aspx>

<sup>3</sup> Федеральный закон "О национально-культурной автономии": новые правовые аспекты, Материалы "круглого стола" 22 апреля 2010 года, М., 2011.



ները կդադարեցնեն իրենց գործունեությունը, քանի որ ազգային-մշակութային ինքնավարություններն ազգային ինքնության պահպանման առումով առավել արդյունավետ ինստիտուտներ են, իրականում ամեն ինչ այլ կերպ զարգացավ: Օրինակ նախապես ձևավորված՝ հայերի դաշնային ազգային-մշակութային ինքնավարությունը դադարեցրեց իր գործունեությունը: Նրա հետ «մրցակցության» ընթացքում հաղթող դուրս եկավ «Ռուսաստանի հայերի միություն»-ը: Վերջինիս առաջնորդներին սկզբում չէր հետաքրքրում ազգային-մշակութային ինքնավարությունը: Խիստ բարդ էր դրությունը հրեաների կազմակերպություններում: Միայն Մոսկվայում կա 27 հրեական կազմակերպություն, իսկ նրանց ազգային-մշակութային ինքնավարությունը «քարշ է տալիս իր խղճուկ գոյությունը»<sup>1</sup>:

2010 թ. դրությամբ հետաքրքիր զարգացումներ արձանագրվեցին միևնույն ժողովրդի ազգային-մշակութային ինքնավարություն-ազգային հասարակական կազմակերպություն փոխհարաբերություններում:

1. ազգային հզոր կազմակերպությունները իրենց ներսում ունեն ազգային-մշակութային ինքնավարության մեխանիզմը որպես գործունեության եղանակներից մեկը: Այդպիսին են ՌԴ հայերը,

2. ազգային կազմակերպությունը և ազգային-մշակութային ինքնավարությունը շարունակում են զուգահեռ գործունեությունը՝ միմյանց չնկատելով, բայց նաև բացե-իբաց չհակամարտելով: Այդպիսին են ՌԴ ադրբեջանցիները,

3. ազգային-մշակութային ինքնավարությունը ուղղակիորեն հակամարտում է ազգային կազմակերպության հետ, որն իրականացնում է նաև ազգային-մշակութային ինքնավարության գործառույթներ: Այդպիսին են ՌԴ գերմանացիները,

4. ազգային-մշակութային ինքնավարությունը օրենքի տառին համապատասխան պահպանում է իր տեղը, բայց առանձին հարցերում համագործակցում ազգային կազմակերպության հետ: Այսպիսին են ՌԴ հրեաները:

Մյուս էական հիմնահարցն այն է, որ ազգային-մշակութային ինքնավարությունները երբեմն փորձում են զբաղվել այնպիսի խնդիրներով, որոնք դուրս են նրանց լիազորությունների շրջանակներից, ինչպես օրինակ՝ միգրացիոն հարցերը, իրավապաշտպանությունը, հայրենակիցների աշխատանքի տեղավորման խնդիրները, ծայրահեղականության դեմ պայքարը և այլն<sup>2</sup>:

Փաստորեն քննարկման ժամանակ արժևորվել է հայկական կազմակերպությունների և հատկապես Ռուսաստանի հայերի միության գործունեությունը: Քանի որ ՌՀՄ-ն ռուսահայության շրջանում վերածվել է դոմինանտ կազմակերպության, ուստի հարկ է մանրամասնորեն անդրադառնալ այդ կազմակերպությանը՝ լուսաբանելու համար ներազգային կենսագործունեության՝ դեռևս սաղմնային վիճակում գտնվող միջավայրի համառուսաստանյան մոդելի առանձնահատկությունները:

#### 4. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ (ՌՀՄ)

1999 թ. սեպտեմբերին Երևանում տեղի ունեցավ «Հայաստան-Սփյուռք» առաջին խորհրդաժողովը: ՌԴ հայությունն այստեղ ներկայացված էր մի քանի տասնյակ պատվիրակներով ՌԴ բոլոր մասերից: Այստեղ նրանց մեջ ծնվեց համառուսաստանյան հայկական կազմակերպություն ստեղծելու գաղափարը: Մասնակիցներից Արա Աբրահամյանը ձևավորեց նախաձեռնող խումբ, որը սկզբում սկսեց կապեր հաստատել Մոսկվայի հայ մտավորականության հետ: Նպատակը նրանց նախաձեռնող խմբում ընդգրկելն էր: 1999 թ. նոյեմբերին նրանց առաջարկվեց մաս կազմել ապագա համառուսաստանյան հայկական հասարակական կազմակերպության կազմակերպչական

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 54-55:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 70-71:

հանձնաժողովի ստեղծման նպատակով ձևավորված նախաձեռնող խմբին: Դիմումն անպատասխան չմնաց. շատերն արձագանքեցին դրան:

2000 թ. հունվարին Մոսկվայի մոտակայքում տեղի ունեցավ նախաձեռնող խմբի առաջին նիստը: Այնտեղ հավանության արժանացավ համառուսաստանյան հայկական հասարակական կազմակերպության ստեղծման հայեցակարգը: Որոշվեց այն ուղարկել ՌԴ-ում գործող բոլոր հայկական կազմակերպություններին՝ Կազմակերպչական հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու նպատակով խնդրելով առաջարկել սեփական թեկնածուները: Կազմակերպությունը ձևավորել գաղափարական կենտրոնացման (Մոսկվա) և տարածքային ապակենտրոնացման (մարզային ու երկրամասային կառույցներ) սկզբունքներով:

2000 թ. փետրվարին Կազմակերպչական հանձնաժողովն անցկացրեց իր առաջին նիստը: Այն նախագահում էր Ա. Աբրահամյանը: Արդեն մարտին տեղի ունեցավ ՌԴ 45 սուբյեկտների հայության հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համաժողովը: Այնտեղ հավանության արժանացավ ստեղծվելիք հասարակական կազմակերպության կանոնադրության նախագիծը, սահմանեց հիմնադիր համագումարի օրը և առաջարկեց կազմակերպությունը կոչել «Ռուսաստանի հայերի միություն»:

Միության հիմնադիր համագումարը տեղի ունեցավ Մոսկվայում 2000 թ. հունիսին, որին մասնակցում էին ՌԴ 44 սուբյեկտների 183 ներկայացուցիչներ: Կազմակերպության նախագահ ընտրվեց Ա. Աբրահամյանը: Համագումարում ընտրվեց Խորհուրդ, Կառավարչություն և վերստուգիչ հանձնաժողով: Նրանց մեջ մտան մտավորականության և հոգևորականության ներկայացուցիչներ<sup>1</sup>:

ՌՀՄ-ի ծրագրի 1-ին հոդվածում կազմակերպությունը ներկայացված է որպես «քաղաքացիների և իրավաբանական անձանց հասարակական միավորումների ոչ կառավարական հասարակական միություն՝ հիմնված Ռուսաստանի Դաշնությունում բնակվող հայերի ազգային ինքնության պահպանման, լեզվի, կրթության և մշակույթի զարգացման շահերի ընդհանրության վրա»<sup>2</sup>:

Ծրագրում սահմանվում է ՌՀՄ գործունեության տարածքը. «Կազմակերպությունն իրականացնում է իր գործունեությունը Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների կեսից ավելիի տարածքում և ունի համառուսաստանյան կարգավիճակ»<sup>3</sup>:

ՌՀՄ-ն իր առաջ դրեց հետևյալ նպատակները.

1. «աջակցություն Ռուսաստանի Դաշնությունում բնակվող հայերի ինքնության պահպանմանը և ամրապնդմանը,

2. աջակցություն ժողովուրդների միջև խաղաղության, բարեկամության և համաձայնության ամրապնդմանը...,

3. աջակցություն Ռուսաստանի Դաշնությունում բնակվող հայերի տնտեսական, սոցիալական, իսկական և կրթամշակութային շահերի պաշտպանությանը...,

6. աջակցություն ռուսաստանցի հայերի հոգևոր և ինտելեկտուալ ներուժի պահպանմանն ու բազմապատկմանը,

7. կազմակերպության անդամների համար ստեղծագործական աշխատանքի, արհեստավարժության և մասնագիտացվածության համընդհանուր աճի, նրանց մտավոր ներուժի բացահայտման և օգտագործման համար պայմանների ստեղծում,

8. աջակցություն ռուսաստանցի հայերի շրջանում այնպիսի աշխարհընկալման ձևավորմանը, որ հնարավորություն կտա օգտագործել արդի տեխնոլոգիական նվաճումները,

9. աջակցություն ռուսաստանցի հայերի՝ Ռուսաստանի Դաշնության և օտարերկրյա պետությունների բոլոր ազգությունների և ժողովուրդների, ինչպես նաև նրանց էթնոմշակութային միավորումների հետ ակտիվ համագործակցությանը,

<sup>1</sup> «На пути к САР», [http://www.sarinfo.org/way/on\\_the\\_way.shtml](http://www.sarinfo.org/way/on_the_way.shtml)

<sup>2</sup> «Устав САР», [http://www.sarinfo.org/documentation/?c=normative&a=ustav\\_sar](http://www.sarinfo.org/documentation/?c=normative&a=ustav_sar)

<sup>3</sup> Նույն տեղում:

10. աջակցություն Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև բարեկամական միջպետական հարաբերությունների զարգացմանն ու ամրապնդմանը»<sup>1</sup>:

ՌՀՄ-ն իր առաջ խնդիր էր դնում նաև աջակցել Ռուսաստանի հայերի կամավոր միավորմանը, ազգային ինքնության պահպանմանը, հայ ժողովրդի մշակութային, մտավոր և այլ արժեքների զարգացմանը, մշակել ու իրականացնել կրթական ծրագրեր (հայոց լեզվի, գրականության և պատմության ուսուցում՝ նաև համապատասխան ուսումնական հաստատություններ հիմնադրելու միջոցով), մշակել և իրագործել ծրագիր մշակութային բնագավառում, ստեղծել հայկական մշակութային ոչ պետական հիմնարկներ և այլն<sup>2</sup>:

Ակնհայտ է, որ ՌՀՄ ծրագիրը մեծապես հիմնված է ՌԴ օրենսդրությամբ ազգային փոքրամասնությունների համար նախատեսված իրավունքների վրա: Պատահական չէ, որ վերոհիշյալ քննարկման ժամանակ շեշտվել է այն, որ ՌՀՄ-ն ազգային-մշակութային ինքնավարության ինստիտուտն ընդգրկել է իր գործիքակազմում:

ՌՀՄ-ն բաղկացած է տարածաշրջանային և տեղական բաժանմունքներից, մասնաճյուղերից և ներկայացուցչություններից: Տարածաշրջանային բաժանմունքները գործում են Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների՝ հանրապետությունների, երկրամասերի, մարզերի, Մոսկվա և Սանկտ Պետերբուրգ քաղաքների, ինքնավար մարզերի, ինքնավար շրջանների տարածքներում: Տեղական բաժանմունքները գործում են Ռուսաստանի Դաշնության տեղական ինքնակառավարման մարմնի տարածքում: Նրանք մտնում են ՌՀՄ համապատասխան տարածաշրջանային բաժանմունքի կազմի մեջ: Ինչ վերաբերում է բաժանմունքներին, մասնաճյուղերին և ներկայացուցչություններին, ապա դրանք կարող են ստեղծվել ինչպես Ռուսաստանի Դաշնությունում, այնպես էլ արտասահմանում<sup>3</sup>:

Չնայած այս ծավալուն ծրագրերին, ՌՀՄ-ն անհրաժեշտ գտավ որպես գործիք կիրառել ազգային-մշակութային ինքնավարության ինստիտուտը, քանի որ հենց դրա շնորհիվ էր հնարավոր դառնալու ծարագրերի լավագույնս իրականացումը: Հայտնի է, որ նախկինում գրանցված՝ Ռուսաստանի Դաշնության հայերի դաշնային ազգային-մշակութային առաջին ինքնավարությունը գործել է մինչև 2002 թ.: Նրա գործունեությունը դադարեցվել է և այն հանվել է «Իրավաբանական անձանց գրանցման միասնական պետական ռեգիստրից»<sup>4</sup>: 2013 թ. հուլիսի 5-ին Մոսկվայում անցկացվեց նորաստեղծ «Ռուսաստանի հայերի դաշնային ազգային-մշակութային ինքնավարություն» հասարակական կազմակերպության (ՌԴ «Իրավաբանական անձանց գրանցման միասնական պետական ռեգիստրում» գրանցվել է 2013 թ. մարտի 12-ին) համագումարը: Այստեղ հրաժարական ներկայացրեց «Ռուսաստանի հայերի դաշնային ազգային-մշակութային ինքնավարության» նախագահ, ՌՀՄ Իվանովոյի մարզային կառույցի ղեկավար Ա. Դարիբյանը, որի փոխարեն նախագահ ընտրվեց ՌՀՄ նախագահ, ՌԴ նախագահին կից միջազգային առնչությունների խորհրդի անդամ Ա. Աբրահամյանը<sup>5</sup>:

Փաստորեն, եթե նախկինում ՌՀՄ բավարարվում էր որպես ազգային կազմակերպություն՝ ազգային-մշակութային ինքնավարության մեխանիզմը որպես գործունեության եղանակներից մեկը օգտագործելով<sup>6</sup>, այժմ արդեն անհրաժեշտություն առաջացավ հիմնել «Ռուսաստանի հայերի դաշնային ազգային-մշակութային ինքնավարություն» հասարակական կազմակերպություն: Ակնհայտ է, որ ՌԴ-ում ևս շեշտադրումը

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>3</sup> «Устав САР», [http://www.sarinfo.org/documentation/?c=normative&a=ustav\\_sar](http://www.sarinfo.org/documentation/?c=normative&a=ustav_sar)

<sup>4</sup> <http://www.list-org.com/company/1986896>,

<https://sbis.ru/contragents/7731180087/773101001#msid=s1454759842249>: Այս կազմակերպության մասին արձանագրային տեղեկություններ կարելի է ստանալ <https://egrul.nalog.ru/> կայքից՝ փնտրելով «Федеральная национально-культурная автономия армян» բառերը:

<sup>5</sup> Ара Абрамян избран председателем Федеральной национально-культурной автономии армян России, <http://sarinfo.org/sarnews/09-07-13-2.shtml>

<sup>6</sup> Федеральный закон "О национально-культурной автономии": новые правовые аспекты, Материалы "круглого стола" 22 апреля 2010 года, сс. 70-71.

կատարվում է ներազգային կենսագործունեության միջավայրի (հատկապես ինքնուրույն պահպանության միջավայրի) ստեղծման վրա:

Ամփոփելով քննությունը՝ կարող ենք արձանագրել, որ Լիբանանի և ՌԴ հայկական համայնքների զուգահեռ քննությունը ցույց է տալիս հետևյալը.

1. Լիբանանի արդի հայկական համայնքի ձևավորումը տեղի է ունեցել Հայոց ցեղասպանությունից հետո, երբ այդ երկրում հաստատվել են գաղթականության մեծաքանակ խմբեր,

2. համայնքի ձևավորման վրա մեծ ազդեցություն է ունեցել Հայաստանի առաջին Հանրապետության նախկին ղեկավարության ծավալած գործունեությունը,

3. համայնքային կենսունակ կառույցների, ինչպես նաև ներհայկական կենսագործունեության միջավայրի ձևավորումը կախված էր նաև Լիբանանում հիմնական համայնքներին տրվող լայն իրավունքներից,

4. ՌԴ հայությունը, որ 1990-ական թթ. սկզբին հայտնվեց սփյուռքացման գործընթացի անհրաժեշտության առաջ, սկզբում բավարարվեց տեղերում առանձին համայնքների ձևավորմամբ,

5. ՌԴ-ում հայկական համայնքի կայացման համար նախադրյալներ ստեղծվեցին 1990-ական թթ. երկրորդ կեսին, երբ ընդունվեց «Ազգային-մշակութային ինքնավարության մասին» ՌԴ օրենքը,

6. նշված օրենքով ազգային փոքրամասնությունների ներազգային կենսագործունեության համար նախատեսված բավականին լայն իրավունքները ՌԴ-ում հայության ազգային կյանքի կայացման ու զարգացման համար զգալի հեռանկարներ են ստեղծում,

7. հեռանկարային է նաև համառուսաստանյան հայկական հասարակական կազմակերպության Ռուսաստանի հայերի միության գործունեությունը,

8. ՌԴ հայության համար առկա են բոլոր նախադրյալները՝ կենսունակ ներազգային կենսագործունեության միջավայր ձևավորելու համար:

**Арман Егиазарян, Образование национальных сред национальной среды сосуществования в армянской «классической» и «новой» диаспоре (на примере армянских общин ЛИВАНА И РФ).**-Армянская национальная среда сосуществования в Ливане является одним из самых развитых и эффективных в армянской диаспоре. Исследуя основные теоретические функции диаспор, а также процесс формирования Армянской общины Ливана и её общие характеристики, автор считает, что она может служить образцом для других общин армянской диаспоры.

Современная армянская община РФ начала процесс своего формирования после распада Советского Союза. Начиная с 1996 года армяне РФ сформировали свои федеральные, региональные и местные /не территориальные/ национально-культурные автономии.

В 2000 году был основан Союз армян России. Будучи общеармянской общественной организацией в РФ Союз в своей деятельности применяет также механизм национально-культурной автономии. Автор доказывает, что на основе привилегий, предоставляемых национальным меньшинствам в РФ, у российских армян есть все предпосылки для формирования хорошо организованной среды национального сосуществования.

**Ключевые слова:** рассеяние, сообщество, диаспора, среда, сосуществование, организация, структура, «модель», диаспоризация.

**Arman Yeghiazaryan, Formation of national coexistence environments in «classical» and «new» Armenian diaspora (on the example of the lebanon and rf armenian communities).**-The Lebanon Armenian national coexistence environment is one of the most

developed and effective in the Armenian Diaspora. Discussing the main theoretical functions of Diasporas, as well as the formation process of the Lebanon Armenian Community and its general characteristics, author concludes that it can become a model for other Armenian Diaspora communities.

The modern RF Armenian community started its formation process after the collapse of Soviet Union since 1996 the Armenians of the RF have formed their federal, regional and local /non territorial/ national-cultural autonomies.

In 2000 the Union of Russian Armenians- was RF founded. Being a panarmenian public organization in RF the Union also implements the mechanism of national-cultural autonomy in its activity. The author proves, that the Armenians of the RF have all possibilities to form well organized national coexistence environment based on privileges provided to the national minorities in the RF.

**Keywords:** *dispersion, community, diaspora, environment, coexistence, organization, structure, «model», diasporization.*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## *ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ*

Էդիկ Մինասյան, ԱՐԻԱՍԻՐՏ ՀԱՅՈՒՎՈՒՆ.....	3
Արտակ Մովսիսյան, ԿԱՐԵՎՈՐ ԴԻՏԱՐԿՈՒՄ «ԴԱՆԻԵԼՅԱՆ» ՆՇԱՆԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ.....	7
Հենգել Մանուչարյան, ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՖԵՆՈՄԵՆԸ.....	13
Ֆելիքս Մովսիսյան, ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ.....	23
Валерий Тунян, НАЦИОНАЛЬНАЯ ИДЕЯ И НАЦИОНАЛЬНЫЕ СОВЕЩАНИЯ В 1914-1917 ГГ. ....	41
Արման Եղիազարյան, ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԵՑԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ «ԴԱՍԱԿԱՆ» ԵՎ «ՆՈՐ» ՍՓՅՈՒՆՔՈՒՄ (ԼԻՔԱՆԱՆԻ ԵՎ ՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ).....	50
Սամվել Պողոսյան, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 1878 Թ. ....	67
Կարինե Եղիազարյան, Քարմիլե Եղիազարյան, ԱՂԲՅՈՒՐ ՍԵՐՈՔ (ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ).....	81
Սամսոն Քառայան, ԴՐՎԱԳՆԵՐ ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ.....	91
Վահագն Հակոբյան, ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄՅԱՄՆԻԿՅԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՄԻՆՉԲՈՒՇԵՎԻԿՅԱՆ ՓՈՒԼԸ.....	96
Կարեն Խաչատրյան, Գագիկ Ժամհարյան, ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՕՐՅԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍԿԻԶԲ).....	108
Էդուարդ Զոհրաբյան, ՀԱՅ-ԱՂԲԵԶԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՊԿ ՌԱԶՄԱԿԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՐԱԿԱՆ ԸՆԿԱՆՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐԶ.....	115
Դավիթ Թինոյան, ՀԵԹՈՒՄ Ա-Ի «ՄՈՆԴՈՒԱԿԱՆ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՆԴՈՒԱԿԱՆ ԿԱՅՐՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ.....	121
Էմմա Ստեփանյան, ԱՄԵՐԻԿԱՀԱՅ «ԱՐԱՔՍ» ՀԱՆԴԵՍԸ (1905-1907 ԹԹ.).....	128
Վարդիթեր Աբրահամյան, X-XI ԴԱՐԵՐՈՒՄ ԲՅՈՒՋԱՆԴԻԱՅԻ ԶԱՎԹԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱԿՈՐՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՃՇՊՐՏՈՒՄ.....	135
Լիլիթ Մելիքյան, ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ.....	143
Գուրգեն Մուրադյան, ՎԱՂՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԻՆԱ ՎԱՇՉԵՎԱՅԻ ՀԵՏԱԶՆՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....	148
Դավիթ Կարապետյան, ԱՇՈՑՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԸ XVIII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԱՄՅԱԿՆԵՐԻՆ ԸՍՏ ՎԱԽՈՒՇՏԻ ԲԱԳՐԱՏԻՈՆԻԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ.....	153
Էդուարդ Հովհաննիսյան, ԴԱՐԱԲԱՂԻ /ԱՐՑԱՆԻ/ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԿՈՎԿԱՍԻ ՀՆԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՎԱՎԵՐԱԳՐԵՐՈՒՄ».....	159
Տաթևիկ Մինասյան, ՀԱՅՈՒՎՈՒՆԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱԲԴՈՒԼՀԱՄԻԴՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻՆ (XIX ԴԱՐԻ ՎԵՐԶ-XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ).....	166
Արամ Խաչատրյան, ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅԱՍԵՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԱՐԾԱՐԾՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ 1900-1907 ԹԹ. ....	174
Սուսաննա Առաքելյան, ԲԱՔԿԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐԶ.....	185
Նարինե Նուշերվանյան, ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐԶԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ.....	191



Էդուարդ Կեսոյան, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ .....	196
Աստղիկ Մովսիսյան, ՀՅԴ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ....	206
Լուսինե Գրիգորյան, ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ (1964-1985 ԹԹ.) .....	215
Մելիք Հովսեփյան, ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ (1964-1985 ԹԹ.) .....	223
Լիլիթ Մատինյան, Հենրիկ Աբրահամյան, ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՆՈՒՆԴ .....	229
Սոնա Մելքոնյան, Էթնիկ ջՏՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐՔԵԶԱՆՈՒՄ ՀԱՅԵՐԻ ՆԿԱՏԱՄՔ (1988-1991 ԹԹ.) .....	237
Դավիթ Ջուլիակյան, Կարինե Ասատրյան, ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ 1991-1994 ԹԹ. ԵՎ ՆՐԱ ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ .....	242
Նժդեհ Հովսեփյան, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԱՎԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՔԱՆԱԿԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ 1991-2001 ԹԹ. ....	250
Վահե Հովսեփյան, ԽՈՋԱԼՈՒԻ ՈԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ .....	261
Վարդան Մակիճյան, ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ .....	269
Գեղամ Ասատրյան, ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ .....	273
Աննակ Սարգսյան, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1995-2017 ԹԹ. ....	281
Гаяне Солахян, ЕВРАЗИЙСТВО В СОВРЕМЕННОМ ИДЕЙНО – ПОЛИТИЧЕСКОМ ПРОСТРАНСТВЕ РОССИИ .....	289
Ռոման Գազանջյան, ՄՈՆԻՐՈՅԻ ԴՈԿՏՐԻՆԱՆ ՈՐՊԵՍ ԱՄՆ-Ի XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՍՅՈՒՆ .....	295
Ջուլիետա Կճանյան, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԸ. ԿԱՆԱԴԱԿԱՆ ՈՒՂԻՆ ԵՎ ԼՈՐԴ ԴԱՐԵՄԸ .....	302
Ժաննա Հարությունյան, ՇԱՌԼ ԴԸ ԳՈԼԻ ԱՖՐԻԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	310
Արսեն Ջուլֆալակյան, ԶՐԱՅԻՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ԹՈՒՐՔ-ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ 90-ԱԿԱՆՆԵՐԻՆ .....	316
Георгий Коларов, МАОИЗМ В ЛАТИНСКОЙ АМЕРИКЕ. СЕНДЕРИЗМ, КАК МАОИЗМ КОНЦА XX ВЕКА .....	322
Անդրանիկ Առաքելյան, ՊԱՂԵՍՏԻՆԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՄԻՋԱՐԱՔԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻԶԱԿԵՏՈՒՄ (1992-2011 ԹԹ.) .....	328
Աշոտ Թովմասյան, ԻՍՐԱՅԵԼԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՈԱԶՄԱՐԴՅՈՒՆԱՔԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ .....	333
Արշալույս Տետեյան, ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՆԴՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱԴՐՔԵԶԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	337
Միգր Հովհաննիսյան, ԳԻՏԱԿԱՆ ՀՂՈՒՄՆԵՐԻ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ .....	344
 <b>ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ</b>	
Ռաֆիկ Նահապետյան, ԳԱՅՈՍ ՊԼԻՆԻՈՍ (ԱՎԱԳ) ՍԵՎՈՒՆԴՈՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ .....	349
Սաակ Տարոնցի, ԱՐԵՎ-ՍԿԱԿԱՌԱԿԻ ՊԱՇՏԱՍՈՒՆՔԸ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԲՐՈՆԶԵ ԳՈՏԻՆԵՐԻ ԶԱՐԴԱՍՈՏԻՎՆԵՐՈՒՄ .....	355

Արմինե Գաբրիելյան, ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԱՆՏԻԿ ԽԵՑԵՂԵՆԻ ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՓՈՐՁ (Մ.Թ.Ա. I – Մ.Թ. III ԴԴ.).....	372
Ռայա Սարգսյան, ՄԻՐԱՔ ԳՅՈՒԴԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՂՈՒՄՆԵՐԻՑ ԳՏՆՎԱԾ ՁԻԹԱՃՐԱԳՆԵՐԸ .....	384
Հասմիկ Հարությունյան, ԿՈՎԿԱՍԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԷԹՆՈԼԵԶԿԱԴԱԿԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ).....	388
Արուսյակ Ղարիբյան, ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԱՐՔԵՏԻՊԱՅԻՆ ԳԾԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԷՊՈՍՈՒՄ .....	401
Մերի Ղալլաբյան, ԱԿԱՆԴԱԿԱՆ ՏԻԿՆԻԿԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՓՈՒՆԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ. ԵՔՊԹ-Ի ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ՕՐԻՆԱԿՈՎ .....	407
Մարինե Հարությունյան, ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՏԻՊԵՐՆ ԱՐՑԱԽՈՒՄ XVII Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XVIII Դ. ՍԿԶԲԻՆ .....	411

**ԱՐԿԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ**

Անի Նազարյան, ԳՅՈՒՄՐՈՒ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ ՎԻՐՏՈՒԱԼ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ .....	416
Siranuysh Araqelyan, ON A KHACHKAR (STONE CROSS) INSCRIPTION IN ARINJ .....	423
Garik Atanesyan, NEW INTERPRETATIONS OF PUBLIC FUNCTIONS OF MONUMENTS IN THE YEREVAN’S CONTEMPORARY PUBLIC DISCOURSE .....	427
Հայկազ Հովհաննիսյան, Հրանտ Ավանեսյան, Սահակ Հովհաննիսյան, Մարինե Մինասյան, ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԿԱՅԱՑՈՒՄԸ ՀԱՅ-ՌՈՒՄԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ .....	434
Հայկուհի Մուրադյան, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԱՅԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ .....	441
Ամբատ Հովհաննիսյան, ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՊՈԵՏԻԿԱՆ ԵՎ ՇԵՔՍՊԻՐԻ ՆՈՐՈՎԻ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ (ՆՈԹԵՐ ՈՒԼԷԱՄ ՇԵՔՍՊԻՐԻ «ՀԱՄԼԵՏԻ»՝ ԱՐԱՄ ԹՈՓՉՅԱՆԻ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ).....	448
Анаит Зурабян, «МОДЕЛЬ ПУТИ» И ЕЁ ОТРАЖЕНИЕ В РОМАНЕ «ЖИЗНЬ И СУДЬБА» .....	462
Դիանա Հակոբյան, ԵՐԵՄԻԱ ՄԵՂՐԵՑՈՒ «ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅՈՑ»-Ը՝ ՀԱՅԵՐԵՆ ԱՌԱՋԻՆ ԸՆԴԱՐՁԱԿ ԲԱՌԱՐԱՆ .....	467
Arevik Minasián, ANÁLISIS SEMÁNTICO DE LOS REFRANES Y PROVERBIOS CON EL COMPONENTE “PERRO” EN ESPAÑOL Y ARMENIO.....	473
Mariana Yepremián, ANÁLISIS SEMÁNTICO - COMPARATIVO DE LOS REFRANES Y PROVERBIOS QUE DENOTAN EL CONCEPTO GATO EN ESPAÑOL Y ARMENIO.....	482
Ասյա Ղարիբյան, ՎՐԱՑԵՐԵՆԻ ՆԱԽԱԲԱՅԵՐՈՎ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԸ .....	491
Լիանա Մալխասյան, ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ .....	497

**ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ**

ՄԵԾԱՐԺԵՔ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ԱԶԱՍԱՄԱՐՏԻ ԿԻՆ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ.....	503
ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՌԷՆԱԳՐԱՎ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ.....	506

**ՄԵՐ ԵՐԱՆՏԱԿՈՐՆԵՐԸ**

САРКИС СУРЕНОВИЧ КАЗАРОВ .....	512
--------------------------------	-----

**ՀԱԿԵՐԺԻ ԶԱՍՓՈՐԴ**

ԷԴՎԱՐԴ ԳԱՒՈՒՄՏԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ.....	514
--------------------------------	-----

ՀԱԿՈՔ ԲԱՂՂԱՍԱՐԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ. ԿԱՍՏԱԿԱՇԱՏ ԽՄԲԱԳԻՐՆ ՈՒ ԳՐԱԿԱՆԱԳԵՏԸ .....	516
<i>ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ</i> .....	519